հայրը անդամալոյծ, կինը հիւանդ, երկու զաւակները ծաղկից պառկած առանց կրակի, ճրագի, հացի ու ջրի, խրճիթի մուտքը ձիւնով ծածկված, առանց մէկի կարեկցութեան և օգնութեան այսպէս երեք օր վայր ընկած։ Ահա այսպիսի թշուառ և աղետալի տեսարանների անհամար ականատես լինելով, մեր երիտասարդութիւնը չը կարողացաւ էլ աւելի անտարբեր մնալ դէպի մարդկային պահանջները, այլ դրդված նոյքին զգացմունքից և մարդասիրութիւնից, շտապեց քաղաքիս մէջ հանգանակութիւն բանալ, որպէս զի ժողոված գումարով ալիւր առնեն, հաց թխեն ու չքաւորներին ձրի բաժանեն։ Երկու բոպէում այս մտադրութիւնը իրագործվեց. ընտրվեցան երիտասարդ վաճառականներից հինգ հոգի, որոնք են՝ Անդրէաս Գասպարեանց, Համբարձում Խըլղաշեանց, Միքայէլ Գափրիեանց, Միքայէլ Ղուկասեանց և Իսահակ Ղահրամանեանց և որոնց յանձնվեց հանգանակութիւն բանալ։ Հինգ օր չը կայ, որ սկսվել է հանգանակութիւնը և ժողոված է աւելի քան 1500 ր.։ Այն օրը, որ բացվեց հանգանակութիւնը՝ նրա միւս օրից քաղաքային հրապարակում սկսվեց անճար չքաւորներին իւրաքանչիւրին օրական մի մի ֆունտ ձրի հաց բաժանվելը։ Այս բոպէիս 150 ընտանիք աւելի քան 800 հոգի ձրի կերակրվում են և յուսով ենք, որ կարող են կերակրվել մի քանի ամիսներ և եթէ նուիրատուութիւնները այսպէս առատ շարունակվեն, գուցէ մի ամբողջ տարի էլ։

Պարտք եմ համարում հրապարակաւ, ինչպէս նուիրատու պարոններին, նոյնպէս և այդ գործող ու աշխատող երիտասարդներին մեր խորին շնորհակալութիւնը յայտնել։ Քիչ ուշադրութեան արժանի չէ և արհեստաւոր երիտասարդների օգնութիւնը։ Սոքա կիրակի օրերը դուրս են գալիս քաղաքային հրապարակը և հաց ծախողներից ամեն մէկը իր ոյժի համեմատ առնում է հաց պուդը 9 կոպէկով և աղքատներին 5 կոպէկով բաց թողում։ Այսպէս ամեն մէկը չէ խնայում իր օգնութիւնը քաղցածութեան և թանգութեան առաջը առնելու համար։ Իրաւունք եմ տալիս ինձ ասել. կեցցէ Շուշու հայ երիտասարդութիւնը, կեցցէ և հայ անուան միշտ արժանի լինի։

Բայց եթէ մի քիչ ուշադրութեամբ նայենք մեր չորրջը, անպատճառ կը համոզվենք, որ միայն թանգութիւնը չէր Շուշու այս թշուառ օրը գցողը՝ բնական հարուածը մի կողմից և մարդկային վայրենի արարմունքը միւս կողմից միմեանց հանդիպելով, ձեռք ձեռքի տուին և այս աղէտալի օրը ձգեցին ուտեստների կողմից առատ և հարուստ Շուշին։ Թանգութիւնը, զանազան հիւանդութիւնները, սաստիկ ցրտերը, անխնայ մահը, մեր թշուառական մի քանի անողորմ վաճառականների շահասիրութիւնը, կալուածատէրերի անաստուածութիւնն էին գլխաւոր առիթները, որ մեզ այս օրը հասցրին։ Ո՞վ կարող էր մի երկու տարի սրանից առաջ նախագուշակել, թէ Շուշին պուդը 4 րուբլ ալիւր կը տեսնէ, ով կը համարձակվէր ասել, թէ Շուշին, այս ուտեստների առատ երկիրը, մի օր ստիպված կը լինի քաղցածութիւն հրատարակել և, ճշմարիտ, եթէ ցրտերը այսպէս մի երկու շաբաթ շարունակվէին և մեզ ուրիշ երկիրներից ալիւր չը հասցնէին և մեր կալուածատէրերը չը մեղմացնէին իրենց սրտերը, այն ժամանակ ժողովրդի վիճակը բոլորովին անտանելի կը լինէր։ Բոլոր պաշարեղէնների գները քառապատիկ, հնգապատիկ իրենց սովորական գներից բարձրացել են։

Վաճառականական ընկերութեան անդամները, որոնք Բագուից ալիւր էին բերել տուել, որպէս զի Շուշում էժան գնով ծախէին, կարծես, զզջացին իրենց խոստումը մինչև վերջը շարունակել. շուտով բաժանվեցան զանազան կուսակցութիւնների և սկսեցին գործը առաջ տանելու փոխանակ յետ տանել և աւելի վնասել։ Ասում են մի վաճառական պ. Յ. Գ., որի վրա կասկածում են, թէ մեծ քանակութեամբ ցորեն ունի, նա է աւելի խառնում գործը. միշտ կռիւներ և անբաւականութիւններ է բարձրացնում և ստիպում է, որ հացի ֆունտը աղքատներին 5 կոպէկ ծախելու փոխանակ 8 կոպէկով ծախեն։ Լսում ենք նոյնպէս, որ վաճառականական ընկերութեան բոլոր անդամները էլ չեն խառնվում այս գործի մէջ, բացի պ. պ. Մինաս Խունեանցը, Սահակ Թաղէոսեանց և Արտէմ Աղամեանցը։ Մեծ. Միրզաջան Պատուականեանցն էլ իր սեփական ալիւրից իր տանը հաց է թխել տալիս և չքաւորներին էժան գնով ծախում։ Մեզ հաւատացնում են, որ վաճառականների բարեգործական ընկերութիւնը, որը Բագուից ալիւր էր բերել տուել, և որի մասին թէ «Մշակում» և թէ այլ պարբերական թերթերում իր ժամանակին խօսվել էր, փոխանակ վնաս անելու, բաւականին աշխատանք է վեր առել. եթէ այս մեր լսածը ճշմարիտ է, ուրեմն ասենք. կեցցեն մեր ճարպիկ ու բարեգործ վաճառականները։

Գիւղերից նոյնպէս պակաս վատ լուրեր չենք լսում. կենդանիների սաստիկ հիւանդութիւն և կոտորվածք է։ Զարմանալին այն է, որ գիւղացիները այս թանգութեան ժամանակը փոխանակ կենդանիների մսով կերակրվելու, մորթում են նոցա և միսը աղ տալի, որ պահեն մինչև պասի վերջանալը ու յետոյ ուտեն։ Ցանկալի էր իմանալ, ինչ են մտածում սրա մասին մեր հոգևորականները. արդեօք թոյլ կը տան նոցա պաս ուտել, թէ կը հրամայեն էլի շարունակել պաս պահելը։

Այս բոպէիս նահանգապետից լուր ստացվեց, որ կառավարութիւնը ընդունել է շուշեցիների խնդիրը և թոյլ է տուել արքունական շտեմարանից 300 պուդ ալիւր վեր առնել, այն պայմանով, որ հինգ տարուց յետոյ քաղաքը էլի նոյն քանակութեամբ ալիւր վերադարձնէ կառավարութեանը։ Վճռել է նոյնպէս քաղաքային դրամից, որ պետական բանկումն է, 5000 րուբլի ևս վեր առնել ալիւր գնելու համար։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Աշտարակ, 15 ապրիլի

Բաւական չէ մեր հայ եղբայրներից շատերի բարոյական պէտքերից զրկված լինելը, որի պատճառաւ առաջ գնալ դժուարին է լինում մեզ ամենքիս.. կարդում ենք շատ անգամ «Մշակ» լրագրի միջոցաւ Հայաստանում տիրապետող մարդախանձ սովի մասին, որի անգութ և աղետալի հարուածների տակ կը հեծեն մեր համբերին եղբայրները—Հայաստանի տխուր աւերակների պահապանները, որոնք չը նայելով իրանց անտանելի և հարստահարեալ դրութեանը, երկաթի տոկունութեամբ դարերի ընթացքում պահպանեցին հայութիւնը մեր հայրենիքում—Հայաստանում, մոնղոլական աւերիչ բռնակալութեան տակ, և այդ կենդանի նահատակներին ըստ կարի օգնելու համար վաղուց ցանկանում էի ստորագրութիւն բանալ, որով և Աշտարակը օգնութեան ձեռք մեկնած կը լինէր և գէթ մի վայրկեան թեթևացրած Հայաստանի որդւոց դառն հառաչանքները։

Շտապեցի պատրաստել ստորագրութեան թերթը և «Մշակի» թերթերէն մի քանիսը ձեռքիս բռնած, որի կենդանի և սրտաճմլիկ յօդուածները քարացած սրտերը անգամ ի գութ կը շարժէին, դիմեցի իմ ծանօթներին՝ Աշտարակի երիտասարդներին և տիկիններին, որոնց սրտերում տակաւին պահվում է արդար և ազգայնութեան վեհ զգացում, և կարեկցութեան ոգի, որոնք ուրախութեամբ յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը օգնել իրենց սովատանջ եղբարց և քերց։ Ստորագրութիւնից գոյացաւ յիսուն ու վեց րուբլի 50 կ., որից դուրս գալով փոստի ծախքը 50 կ., մնում է 56 րուբլի, որը ուղարկելով խմբագրութեանդ խնդրում եմ հասուցանել ուր հարկաւորն է և տպագրել «Մշակի» մէջ նուիրատուաց անունները ի միամտութիւն։

Ահա նուիրատուների ցուցակը. Խուսմ Շահազիզեանց 1 ր., Մերկերիոս Շուխեանց 3 ր., Սմբատ Սիսակեանց 1 ր., Ռուստամ Տէր Օհաննէսեանց 1 ր., Գրիգոր Բաբելեանց 1 ր., Ներսէս քահանայ Տէր Օհաննէսեան 1 ր, դպիր Արշակ Թամազեանց 1 ր., Խաչատուր Քոչարեանց 1 ր., Յակոբ Բաբելեանց 1 ր., Աբգար Մակարեանց 1 ր., Պօղոս Շահազիզեանց 2 ր., Փիլիպոս Շահազիզեանց 1 ր., Մարգար Թումանեանց 1 ր., Կարապետ Փարվանեանց 1 ր., Առաքել Վարդազարեան 1 ր., Բարսեղ Բրէնց 1 ր., Կարապետ Շահազիզեանց 1 ր., Յովհաննէս Աղաւեանց 1 ր., Բաղդասար Գասպարեան 1 ր., Սիմէօն Շահազիզեանց 1 ր., Փիլիպոս Շուխեանց 1 ր., Մկրտիչ Շ. Շահազիզեանց 1 ր., Ներսէս Վարդանեանց 1 ր., Գաբրիէլ Շահնազարեան 1 ր., ոսկերիչ Խաչան Նազարեան շուշեցի 1 ր., Սարգիս Փարվանեանց 1 ր., Սարիբէկ Ոսկանեանց 1 ր., Կարապետ Գ. Գասպարեան 1 ր., Ղազար Սուքիասեանց 1 ր., Գասպար Խալիբեան 1 ր., Գէորգ Անթանեանց 1 ր., Խ. Աւագեան 1 ր., Սէր. Բոյեաղչեանց 1 ր., Սարիբէկ Աւագեանց 1 ր., Սիմէօն Կ. Շահազիզեանց 1 ր., Յակոբ Աղամեանց 1 ր., Մեսրովբ Սարգիսեանց 1 ր., Սիրական Արամեանց 1 ր., Ասատուր Աղաւեանց 1 ր., Կարապետ Մկրտչեան 50 կ., Գէորգ Ղափանեանց 50 կ., Ալէքսան Տէր-Խաչատուրեան 50 կ., Բաղդասար Գասպարեան 50 կ., Ոհան Ալէքսանեան 50 կ., Աղաբար Շուխեանց 55 կ., Սարգիս Արծրունի 40 կ., Յակոբ Ռուստամեան 20 կ., Յակոբ Արամեան 20 կ., Կարապետ Թամազեանց 20 կ., Պապիկ Արամեանց 25 կ., Արտաւազդ Բոյեաղչեանց 50 կ., Բենիամին Բաբլեան 30 կ., Արմենակ Բաբլեան 20 կ., տիկին Հռիփսիմէ Շահազիզեանց 1 ր., տ. Սանդուխտ Բոյեաղչեանց 50 կ., տ. Գայիանէ Բաբլեանց 50 կ., տ. Մարգարիտ Բաբլեանց 1 ր., տ. Հերիքնազ Բոչեանց 50 կ., տ. Գիւլզար Թամազեանց 50 կ., օր. Կալիպսոյ Շահազիզեանց 1 ր., մի անյայտ տիկին 20 կ., Ջանիբէկ Աղամեանց 1 ր., Գրիգոր Վարդազարեանց 1 ր., Թադէոս Աղամեանց 1 ր., Ստեփան Շուխեանց 1 ր.։

Սմբատ Սիսակեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Նոյն վիճակին ենթարկվեցաւ և Լայարդի ձգտումը Բեկեր-փաշային Հայաստանի վարչութեան գլխաւորը նշանակելու համար։ Անգլիական դեսպանի և սուլթանի մէջ եղած երկար բանակցութիւններից յետոյ, Բեկեր-փաշա թողեց Կ. Պոլիսը և ուղևորվեցաւ Հայաստան ոչ թէ գլխաւոր-նահանգապետի պաշտօնով, ինչպէս առաջարկում էր անգլիական դեսպանը, այլ իբրև վերանորոգութիւնների տեսուչ և մի և նոյն ժամանակ նրան որոշ պարտաւորութիւններ և իրաւունքներ չը տրվեցան։ Բեկեր-փաշա ուղևորվեցաւ Աղեքսանդրետա, այնտեղից արևմտեան Հայաստանը և ներկայումս գտնվում է Սիվասի մէջ։ Նրա ուղարկելը, որ այդքան աղմուկ հանեց և այդքան յոյսերի պատճառ եղաւ, վերջացաւ մի օտարոտի ճանապարհորդութեամբ, որ Անգլիայի համար այնպիսի հետախուզութեան նշանակութիւն կունենայ, որ արել է մի փորձված և Բիկոնսֆիլդի նպատակներին համակրող զինուորական։

Բոլոր այս ասածները ներկայացնում են անգլիական դիպլոմատիայի գործունէութիւնը։ Այդ բոլորին անգլիական դիպլոմատիան մասնակցում էր մի որ և է ճանապարհով։ Այժմ պէտք է ասել, թէ անգլիական դիպլոմատիան ի՞նչ գործերին էր մասնակցում անուղղակի կերպով։ Այդ կողմից ամենագլխաւոր գործը ասիական Թիւրքիայի մէջ երկաթուղիներ կառուցանելու և նրանց գործածելու խնդիրն է։ Թիւրքաց կառավարութեանը երկաթուղիների շատ նախագծեր ներկայացվեցան։ Մի քանի նախագծեր մշակված էին Թիւրքաց շահերի համեմատ։ Այդ նախագծերով առաջարկվում էր երկաթուղիներ անցկացնել Բոսֆորից մինչև պարսկական սահմանները, որոնք ճիւղեր պէտք է ունենային մինչև Սև և Միջերկրական ծովերը։ Այդպիսի մի որոշ գծով մտադրված էր կենդանացնել ասիական Թիւրքիայի ներքին նահանգները, նրանց միջոց տալով ծախել իրանց արդիւնաբերութիւնները։ Միւս նախագծերը մշակված էին բոլորովին անգլիական շահերի համեմատ. նրանք երկաթուղու գիծ էին անցկացնում Աղեքսանդրետա նաւահանգստից մինչև Պարսից ծոցը, ճիւղեր անցկացնելով Հայաստանի մէջ։ Միւս նախագծերը ձգտում էին բաւականացնել թէ առաջին և թէ երկրորդ շահերին։ Թիւրքիան չը համաձայնեց Անգլիայի շահերի համեմատ երկաթուղիներ կառուցանել, բայց այնուամենայնիւ նա իրաւունք տուեց բանկիր Գաուսոնին երկաթուղի կառուցանել Սկուտարիից մինչև Իզմիդ և այդ գիծը շարունակել մինչև երկրի խորքերը։ Այսպիսով գլխաւոր գիծը, որից կախված է ասիական Թիւրքիայի մէջ միւս գծերի անցկացնելը, այնուամենայնիւ անգլիացիների ձեռքն է տուած։ Անկարելի է ենթադրել, որ անգլիացիները հոգան Թիւրքաց շահերի մասին, մանաւանդ ասիական Թիւրքիային սահմանակից Ռուսաստանի և Պարսկաստանի շահերի մասին։ Անգլիացիների աշխատանքները Մախսուսէ ընկերութեան շոգենաւերի, նոյնպէս և Բէյկօս և Սերգըլի ձեռք բերելու համար անաջող անցան։ Այդ ձգտումները նոյն են, ինչ որ Սև ծովի վրա ծովային կայարաններ ձեռք բերելու աշխատանքները։

Մինիստրութեան փոփոխվելը, ի հարկէ, կը փոխի Անգլիայի արևելեան քաղաքականութեան բնաւորութիւնը։ Գլադստոն անպատճառ պէտք է դադարեցնի այն աշխատանքները, որոնք արվում են պատերազմ պատրաստելու համար, որովհետև պատերազմի համար պատրաստ լինելուց յետոյ, մի քայլ է մնում մինչև պատերազմի սկսելը։ Ռուսաստանի և Անգլիայի շահերը Արևելքում միմեանց այնքան հակառակ չեն, որքան աշխատում էր ցոյց տալ լորդ Բիկոնսֆիլդ։ Ընդհակառակը երկու պետութիւններն էլ հետևում են մի նպատակի, որ կարելի է երկու խօսքով յայտնել, քաղաքակրթութեան տարածելը։ Այդ նպատակին հասնելը ընդհանուր աշխատանքներով շատ հեշտ է, մանաւանդ այն ժամանակից, ինչ անգլիական կառավարութիւնը անցել է այնպիսի մարդկերանց ձեռքը, որոնք ի սրտէ համակրում են քաղաքակրթութեան գործին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիսի։ Այսօր, մայիսի 22-ին, առաւօտը Աստուծոյ կամքով վախճանվեցաւ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհին։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ներքին մինիստր Մակով ուղևորվեցաւ Վօլգեան մի քանի նահանգները, իր պաշտօնի վարելը մինիստրի ընկեր Մաւրինովին յանձնելով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը արժէ 93 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր. 50 կ., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 75 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25½ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 217 մարկ, Փարիզի վրա 268 ֆր. 25սանտիմ։ Տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է Թագաւոր Կայսրի հրովարտակը, որով բոլոր հպատակներին յայտնվում է Թագուհու վախճանվելը և որ հրաւիրում է աղօթել Հանգուցեալի մաքուր հոգու հանգստութեան համար յաւիտենական երանութեան մէջ։ Պալատից յայտնված է, որ մայիսի 24-ին Աստուծոյ կամքով վախճանված Թագուհու դիակը կը դնվի դագաղի մէջ և կը տեղափոխվի Ձմեռային պալատի եկեղեցին։ Պալատական տիկինները և պարոնները մայիսի 22-ից պէտք է սգի ծանր հագուստ ունենան, մինչև սուգը ժամանակամիջոցների և դասակարգերի կը բաժանվի։ Զինուորական մինիստրը հրամայեց զօրքերին սգի հագուստ ունենալ կէս տարի ժամանակով, չորս կարգերի բաժանմունքներով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Այսօր Աստուծոյ կամքով վախճանված Կայսրուհու մարմինը դագաղի մէջ դրվեցաւ։ Կայսրուհու մարմնի տանելը պալատից Պետրոպավլովսկի եկեղեցին կը կատարվի մայիսի 26-ին, թաղումը 28-ին։ Պուշկինի արձանի բացանելը, որ մայիսի 26-ին էր նշանակված, յետաձգված է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ